ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝
Արշալույս Հարությունյան, Մակրոտնտեսական քաղաքականության վարչության արտաքին հատվածի կանխատեսումների և վերլուծությունների բաժնի պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝ Ավստրիայի Հանրապետություն, ք. Վիեննա, 2023 թվականի հոկտեմբերի 2-ից մինչև հոկտեմբերի 13-ը ներառյալ:

3. Հրավիրող կողմը՝ Արժույթի միջազգային հիմնադրամ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր մասնակցել «Դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականության վերլուծությունը դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության մոդելների միջոցով» խորագրով դասընթացին, որի ընթացքում ներկայացվել է դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության (այսուհետ՝ DSGE) մոդելների կառուցման հիմնական քայլերը, հիմքում ընկած ենթադրությունները, ինչպես նաև մոդելի գնահատման և կալիբրացման մեթոդաբանությունը: Ներկայացված դասախոսություններն ուղեկցվել են գործնական սեմինարներով, որոնք ընթացքում քննարկվել են հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության փոխանցումային մեխանիզմները՝ տարբեր մակրոտնտեսական ենթադրությունների և տնտեսվարող սուբյեկտների տարբեր վարքագծերի ներքո:

Ընդհանուր առմամբ, դասընթացը համապարփակ կերպով ամփոփել է DSGE մոդելի կառուցման, գնահատման և մոդելի օգնությամբ մակրոտնտեսական քաղաքականությունների մշակման և վերլուծության գործընթացները:

5. Քննարկված թեմաները՝

1. Իրական բիզնես ցիկլերի մոդելը,
2. Նորքեյնսյան ենթադրություններով DSGE մոդելները,
3. Աշխատանքի շուկայի կոշտությունները նորքեյնսյան մոդելի շրջանակում,
4. Բաց տնտեսության նորքեյնսյան DSGE մոդելը,
5. Հարկաբյուջետային քաղաքականություն վերլուծությունը DSGE մոդելի միջոցով,
6. Անկատար ֆինանսական շուկաները նորքեյնսյան DSGE մոդելներում,
7. DSGE մոդելների գնահատումը և կալիբրացիան,
8. Կանխատեսումների իրականացումը DSGE մոդելների օգնությամբ,
9. Քաղաքականության սցենարների կառուցում,

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Դասընթացով նախատեսված դասախոսություններն ուղեկցվել են գործնական սեմինարներով՝ մշակված գործիքակազմով ներկայացված տեսական գիտելիքները գործնականում կիրառելու նպատակով: Յուրաքանչյուր գործնական աշխատանք ամփոփվում էր ստացված արդյունքների քննարկմամբ:

Որպես դասընթացի ամփոփում, ներկայացվել է Ռումինիայի տնտեսության համար կառուցված DSGE մոդելի գործնական կիրառություններ, ներկայացվել է շնորհանդես:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Այդպիսիք առկա չեն:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այդպիսիք առկա չեն:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

18 հոկտեմբեր, 2023թ.